

**ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ «ՀՐԵ ՎԱՐԴ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ**

Հոկտեմբերի 30-ին Հայաստանի ազգային գրադարանում անցկացվեց գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի «Հրե վարդ» գրքի շնորհանդեսը: Հեղինակը վերլուծել է բանաստեղծուհի Սոնա Վանի ստեղծագործությունները, ընդգծել նրա դերը հայ գրականության զարգացման գործում: Գիրքը լույս է տեսել «XXI դար: Հայ գրողներ» մատենաշարով, որը գրականագետի նախորդ՝ «XX դար: Հայ գրողներ» մատենաշարի շարունակությունն է:

Միջոցառմանը Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի գիտական գծով տեղակալ Հայկանուշ Ղազարյանը գրականագետ Դավիթ Գասպարյանին հայ գրականությանն ու մշակույթին մատուցած ծառայությունների, գրականագիտության ոլորտում ունեցած մեծ ավանդի և ծննդյան 70-ամյակի առթիվ պարգևատրեց հայ առաջին տպագրիչ «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով:

Բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի ազգային գրադարանի Հանրության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը: Ելույթ ունեցան Հայաստանի Գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, բանաստեղծ-թարգմանիչ, գրականագետ Արտեմ Հարությունյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Ռուզաննա Արիստակեսյանը, բանաստեղծ Խաչիկ Մանուկյանը, գրականագետ Արմեն Ավանեսյանը, տնտեսագիտության թեկնածու Արշակ Վարդանյանը և այլք:

Ազգային գրադարանի մեծ ցուցասրահում ներկայացված էին Սոնա Վանի և Դավիթ Գասպարյանի գրքերի և հոդվածների ցուցադրություն:

Սոնա Վանի բանաստեղծությունները ներկայացրեց Հայաստանի վաստակավոր արտիստ Սիլվա Յուզբաշյանը:

Միջոցառման ավարտին ելույթ ունեցան Սոնա Վանն ու Դավիթ Գասպարյանն, ովքեր շնորհակալություն հայտնեցին կազմակերպիչներին, հույս հայտնելով, որ նմանատիպ միջոցառումները կլինեն շարունակական:

